

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ
ՊԱՀՊԱՆՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀ ՊԵԿ-ԳՀԾՁԲ-2020/11**

ք. Երևան

24» Նոյեմբեր 2020թ.

ՀՀ պետական եկամուտների կոմիտեն, ի դեմս ՀՀ ՊԵԿ գլխավոր քարտուղար Է.Գևորգյանի, որը գործում է ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), միկոդմից, և «ԷԼԻՏ ԷՍՎԵ» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ս. Մկրտչյանի (այսուհետև՝ Կատարող), մյուսկողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ավտոտրանսպորտային միջոցների պահպանման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետև՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետև՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը:

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն:

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը:

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը:

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության առավելագույն գինը կազմում է՝

Չափաբաժին 1 – 600,000 (վեց հարյուր հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ,

Չափաբաժին 2 – 400,000 (չորս հարյուր հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Ավտոմեքենաների, սարքերի և սարքավորումների վերանորոգման ծառայությունների դեպքում, մատուցված ծառայությունների դիմաց վճարումներին իրականացվում են հետևյալ բանաձևով՝
ՎԳ=ՄԳ/ՆԳxՕxՔ, որտեղ

ՎԳ-ն պայմանագրով սահմանված առանձին տեսակի ծառայությունների մատուցման դիմաց վճարվող գումարն է.

ՄԳ-ն ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինն է.

ՆԳ-ն ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարն է.

Օ-ն մատուցված ծառայության առավելագույն միավորի գինն է.

Ք-ն մատուցված ծառայության քանակն է:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (\$ՈՐՄ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, երբ կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագրի կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկանգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն

ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 35 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱԿԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ պետական եկամուտների կոմիտե
ք. Երևան, Մ. Խորենացի 3,7
ՀՎՀՀ 02647057
Հ/Հ900011054013
ՀՀ ՖՆ աշխատակազմի
գործառնական վարչություն
Գլխավոր քարտուղար

Է. Գևորգյան

/ստորագրություն/ Կ.Տ.



ԿԱՏԱՐՈՂ

«ԷԼԻՏ ԷՍՎԵ» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Ահարոնյան 22 փ. բն. 30
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570030407870200
ՀՎՀՀ 00465342
Տնօրեն

Ս. Մկրտչյան

/ստորագրություն/ Կ.Տ.



ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆԱՆ ՄԱՍՆԱԿԱՍՏՈՒՅՑ*

h/h	SU-1 (տեխնիկական գնման/դիագնատտիակա) SU-2 (վերանորոգման) ծառայությունների և SU-2 բնթացքում օգտագործվող պահեստամասերի, քայլուղերի և այլ օժանդակ նյութերի անվանումները	ՀՀ դրամ	
		Տրանսպորտային միջոցների անկնիշները (տեսակները)՝ ըստ չափաբաժինների	
		1-ին չափաբաժին	2-րդ չափաբաժին
	Միցուիշի L-200 2.5TD, /2011, 2013, 2015թ/	Ֆորդ-տրանզիտ /2017թ/	1.8 /2010թ/
1	2	3	4
	SU-1 ներառվող ծառայությունների անվանումները		
1	Բռնկման համակարգի ստուգում	5,000	5,000
2	Սառեցման համակարգի ստուգում	5,000	5,000
3	Ֆուրման համակարգի ստուգում	5,000	5,000
4	Արտածման համակարգի ստուգում	5,000	5,000
5	Կցորդման համակարգի ստուգում	5,000	5,000
6	ՓՏ-ի աշխատանքի ստուգում	5,000	5,000
7	ԱՓՏ-ի աշխատանքի ստուգում	5,000	5,000
8	Կրադանային փոխանցման տուփի ստուգում	5,000	5,000
9	Բաշխիչ տուփի աշխատանքի ստուգում	5,000	5,000
10	Առջևի և հետևի կամրջակների աշխատանքի ստուգում	5,000	5,000

11	Աջջևի և հետևի կախճցնների աշխատանքի ստուգում	5,000	5,000
12	Արգելակային համակարգի աշխատանքի ստուգում	5,000	5,000
13	ABS համակարգի ստուգում	5,000	5,000
14	Էլեկտրական համակարգի աշխատանքի ստուգում	5,000	5,000
15	Ղեկավարման համակարգի աշխատանքի ստուգում	5,000	5,000
16	Թափքի վիճակի ստուգում	5,000	5,000
17	Տարբեր ագրեգատների յուղերի որակի և մակարդակների ստուգում	5,000	5,000
	SU-2 ներառվող ծառայությունների անվանումները		
	1. Շարժիչ		
1	Շարժիչի հանում և տեղադրում	60,000	60,000
2	Շարժիչի հիմնական նորոգում, ներառյալ բոլոր աշխատանքները	250,000	190,000
3	Շարժիչի բարձիկի հանում և տեղադրում	12,000	12,000
4	F/լիսեռի կափարիչի հանում և տեղադրում	20,000	20,000
5	Շարժիչի բլրկի գլխիկի հանում և տեղադրում	60,000	50,000
6	Շարժիչի գլխիկի նորոգում, եռակցում հղկումով	170,000	18,000
7	Շարժիչի գլխիկի փականների փոխարինում հղկումով և խտաբուկերով 1 կ-տ	5,000	5,000
8	Վառոցքի մուսի բնիկի նորոգում	5,000	5,000
9	Շարժիչի փականների գապանակների փոխարինում	2,500	2,000
10	Փականների խցուկների փոխարինում 1 կ-տ	2,000	1,500
11	Հրիչների կամ հիդրոեռիչների փոխարինում 1 կ-տ	5,000	5,000
12	Շարժիչի մխոցաօղերի, հիմնական և շարժաթևի ներդրակների փոխարինում	50,000	40,000
13	Ծնկածև լիսեռի հղկում	45,000	40,000

14	Ծնկաձև լիսեռի հանում տեղադրում կամ փոխարինում	30,000	30,000
15	Ծնկաձև լիսեռի ներդրակների փոխարինում 1 կ-տ	30,000	30,000
16	Ծնկաձև լիսեռի ատամնանիվի փոխարինում	10,000	10,000
17	Ծնկաձև լիսեռի ուղրում	25,000	25,000
18	Ծնկաձև լիսեռի աջակի խցուկի փոխարինում	15,000	15,000
19	Ծնկաձև լիսեռի իեստի խցուկի փոխարինում	60,000	45,000
20	Շարժիչի բլոկի փոխարինում	140,000	100,000
21	Շարժիչի գլանի փոխարինում (ռշտօճեա)	20,000	20,000
22	Մխոցի փոխարինում 1 հատ	30,000	30,000
23	Բաշխիչ լիսեռի հանում և տեղադրում կամ փոխարինում	40,000	40,000
24	Բաշխիչ լիսեռի ակնոցների հանում և տեղադրում կամ փոխարինում	10,000	10,000
25	Բաշխիչ լիսեռի խտավուկի փոխարինում	5,000	5,000
26	Փոկանվի փոխարինում	5,000	5,000
27	Շարժիչի ատամնավոր փոկի փոխարինում	50,000	40,000
28	Շարժիչի շղթայի փոխարինում	80,000	80,000
29	Շարժիչի բարտերի նորոգում (եռակցում)	5,000	5,000
30	Շարժիչի բարտերի միջադիրի փոխարինում	5,000	5,000
31	Շարժիչի բարտերի հանում, տեղադրում մաքրումով	15,000	15,000
32	Շարժիչի յուղի մոլիչի փոխանակում	25,000	20,000
33	Շարժիչի յուղի մոլիչի նորոգում, մաքրում	15,000	15,000
34	Շարժիչի յուղի մոլիչի մաքրում	5,000	5,000
35	Յուղի ձորակի փոխարինում	5,000	5,000
36	Օդաքաշակ փողրակի փոխարինում	5,000	5,000
37	Բ/լիսեռի կափարիչի հանում և տեղադրում կամ փոխարինում	30,000	30,000
38	Շարժիչի կափարիչի միջադիրի փոխարինում	30,000	30,000

39	Թափանցիվի հանում և տեղադրում կամ փոխարինում	50,000	50,000
40	Շարժիչի կափույրի փոխարինում	25,000	25,000
41	Շարժիչի կափույրի միջադիրի փոխարինում	25,000	25,000
42	Շարժիչի շարժաթևի փոխարինում 1 հատ	25,000	25,000
43	Մխցցային օղակների փոխարինում 1 կ-տ	20,000	25,000
44	Շարժիչի բաշխիչ լիսեռի երիթակի փոխարինում	15,000	15,000
45	Ատամնանակի փոխարինում	8,000	8,000
46	Ատամնավոր փոկի պատյանի փոխարինում	15,000	15,000
47	Մոխարիկի փոխարինում 1 կ-տ	15,000	15,000
48	Շարժիչի հանդարտիչի փոխարինում	25,000	25,000
49	Շարժիչի փոկի հորովակի փոխարինում	10,000	10,000
50	Շարժիչի հորովակի առանցքակալի փոխարինում	5,000	5,000
51	Շարժիչի առջևի կափարիչի փոխարինում, հանում, տեղադրում միջադիրի փոխարինումով	15,000	15,000
52	Շարժիչի յուղի արանքաչափի (ՔՅՏ) իրանի փոխարինում	5,000	5,000
53	Շարժիչի փոկի ձգիչի փոխարինում	15,000	15,000
54	Շարժիչի զամասեղի փոխարինում	3,000	3,000
55	Գլխիկի հեղույսի փոխարինում	3,000	3,000
56	Ծնկաձև լիսեռի հեղույսի փոխարինում	3,000	3,000
57	Շարժիչի էլեկտրական համակարգի հանում և տեղադրում	50,000	50,000
58	Շարժիչի վառելիքի սնման համակարգի հանում տեղադրում	35,000	30,000
2. Ղեկավարման, սնման և յուղման համակարգ			
59	Յուղի և յուղի գտիչի փոխարինում	2,000	2,000
60	Ավտոմեքենայի յուղում	2,000	2,000

61	Համակարգչային ախտորոշում, թերությունների վերացումը	8,000	8,000
62	Ֆուլի պումպի փոխարինում	35,000	35,000
63	Ֆուլի ռադիատորի փոխարինում	35,000	35,000
64	Ֆուլի ռադիատորի նորոգում	10,000	10,000
65	Շարժիչի կոնկետորի փոխարինում	30,000	30,000
66	Շարժիչի կոնկետորի միջադիրի փոխարինում	20,000	20,000
67	Վառուցքի մումի փոխարինում 1 կ-տ	5,000	4,000
68	Վառելիքի նուրբ մաքրման գտիչի փոխարինում	15,000	12,000
69	Օդի գտիչի փոխարինում	6,000	6,000
70	Մրանի օդի գտիչի փոխարինում	6,000	6,000
71	Օդի ծախսաչափիչի հանում և տեղադրում կամ փոխարինում	20,000	17,000
72	Օդի գտիչի փողրակի հանում և տեղադրում	5,000	5,000
73	Ինժեկտորի բոցամուղերի փոխարինում	8,000	8,000
74	Ինժեկտորի բոցամուղերի մաքրում	8,000	8,000
75	Բոցամուղի կողավորում	15,000	15,000
76	Ինժեկտորի բոցամուղի խտաբուկերի փոխարինում	5,000	5,000
77	Բենզամիչի փոխարինում	15,000	13,000
78	Վառելիքի կոշտ մաքրման գտիչի փոխարինում	15,000	12,000
79	Վառելանյութի խողովակի հանում և տեղադրում կամ փոխարինում	10,000	10,000
80	Բռնկման կարգավորում	5,000	5,000
81	CO կարգավորում	5,000	5,000
82	Ղեկավարման բլոկի հանում և տեղադրում կամ փոխարինում	20,000	20,000
83	Ղեկավարման բլոկի վերանորոգում	25,000	25,000
84	Վառելիքի բաքի հանում և տեղադրում կամ փոխարինում	25,000	20,000
85	Վառելիքի բաքի մաքրում	15,000	15,000

86	Օղի ծախսի տվիչի փոխարինում	15,000	15,000
87	Զրի ջերմաստիճանի տվիչի փոխարինում	15,000	15,000
88	Զրի խողովակի, փողրակի փոխարինում	15,000	15,000
89	Բենզոլրաքի բենզամոլիչի ցանցի փոխարինում	5,000	5,000
90	Բենզոլրաքի բենզամոլիչի ցանցի մաքրում	2,000	2,000
91	Ցուղի ձևշման տվիչի փոխարինում	10,000	10,000
92	Տվիչի փոխարինում	10,000	10,000
	3. Սառնեցման և արտաձման համակարգ		
93	Հովիտարի հանում և տեղադրում կամ փոխարինում	20,000	17,000
94	Հովիտարի փոկի հանում և տեղադրում կամ փոխարինում	12,000	11,000
95	Ռադիատորի հանում և տեղադրում կամ փոխարինում	40,000	35,000
96	Ռադիատորի նորոգում	45,000	45,000
97	Շերտափեղկի փոխարինում	18,000	18,000
98	Շերտափեղկի կտրավարման ձգաձողի փոխարինում	5,000	5,000
99	Ընդարձակող բաքի փոխարինում	8,000	8,000
100	Ընդարձակող բաքի փողրակի փոխարինում	2,000	2,000
101	Զրի ծորակի փոխարինում	5,000	5,000
102	Հովացման համակարգի ռետինե փողրակի փոխարինում	5,000	5,000
103	Հովիտարի շարժիչի հանում և տեղադրում կամ փոխարինում	15,000	15,000
104	Վառարանի ռադիատորի փոխարինում, բոլոր աշխատանքները ներառյալ	50,000	50,000
105	Վառարանի ռադիատորի նորոգում	20,000	20,000
106	Վառարանի շարժիչի փոխարինում	20,000	20,000
107	Թերմոստատի փոխարինում	13,000	13,000
108	Զրի մոլիչի փոխարինում սիջալիքով	25,000	25,000
109	Զրի մոլիչի սիջալիքի փոխարինում	5,000	5,000

110	Գենեբրատորի փոկի փոխարինում	10,000	8,000
111	Գենեբրատորի փոկի ձգող հորովակի փոխարինում	8,000	8,000
112	Խլարարի հանում և տեղադրում կամ փոխարինում	8,000	8,000
113	Խլարարի 1 հատ խողովակի փոխարինում	10,000	10,000
114	Խլարարի անուրի (xamyr) փոխարինում	1,000	1,000
115	Խլարարի ներդիրի փոխարինում	5,000	5,000
116	Խլարարի կախոցի փոխարինում	2,000	2,000
117	Հովացման հերուկի փոխարինում	3,000	3,000
	4. Կցորդում և ՓՏ		
118	Աշխատանքային կամ գլխ. գլանի հանում և տեղադրում կամ փոխարինում	25,000	25,000
119	Աշխատանքային կամ գլխ. գլանի նորոգում	25,000	25,000
120	Կցորդման սկավառակների և առանցքակալի փոխարինում	30,000	30,000
121	Կցորդման ոտնակի հանում և տեղադրում կամ փոխարինում	15,000	15,000
122	Կցորդման ճոպանի հանում և տեղադրում կամ փոխարինում	15,000	15,000
123	Կցորդման փողրակի հանում և տեղադրում կամ փոխարինում	15,000	15,000
124	Կցորդման երկժանկի փոխարինում	15,000	15,000
125	ՓՏ-ի հիմնական նորոգում	115,000	115,000
126	ՓՏ-ի իսկալաբաժնային փոխարինում	30,000	30,000
127	ՓՏ-ի առջևի խտաբուկի փոխարինում	15,000	15,000
128	ՓՏ-ի հետևի խտաբուկի փոխարինում	15,000	15,000
129	ՓՏ-ի հանում և տեղադրում	35,000	35,000
130	ՓՏ-ի առանցքակալի փոխարինում	15,000	15,000
131	ՓՏ-ի միջանկյալ լիսեռի փոխարինում	25,000	25,000
132	ՓՏ-ի ատամնանիվի փոխարինում	25,000	25,000
133	ՓՏ-ի առաջնային լիսեռի փոխարինում	25,000	25,000

134	ՓՏ-ի երկրորդային լիսեռի փոխարինում	25,000	25,000
135	ՓՏ-ի փոխարկման մեխանիզմի փոխարինում	30,000	30,000
136	ՓՏ-ի բարձիկի փոխարինում	15,000	15,000
137	ՓՏ-ի փոխանցման լծակի փոխարինում	13,500	13,500
138	ՓՏ-ի յուղի փոխարինում	5,000	5,000
139	Վագրաչափի շարժարեքի փոխարինում	5,000	5,000
	5. Բաշխիչ տուփ, կարդանային լիսեռ		
140	Բաշխիչ տուփի հիմնական նորոգում	83,000	
141	Բաշխիչ տուփի հանում և տեղադրում կամ փոխարինում	42,000	
142	Բաշխիչ տուփի քանդում և արատավորում, հավաքում	42,000	
143	Բաշխիչ տուփի բարձր փոխանցման մեխանիզմի փոխարինում	25,000	
144	Բաշխիչ տուփի ցածր փոխանցման մեխանիզմի փոխարինում	20,000	
145	Բաշխիչ տուփի դիաֆրագմաների փոխարինում	20,000	
146	Բաշխիչ տուփի դիֆերենցիալի փոխարինում	20,000	
147	Բաշխիչ տուփի միջակա լիսեռի փոխարինում	25,000	
148	Բաշխիչ տուփի առաջնային լիսեռի փոխարինում	25,000	
149	Բաշխիչ տուփի երկրորդային փոխարինում	25,000	
150	Բաշխիչ տուփի բարձիկի փոխարինում	25,000	
151	Բաշխիչ տուփի խտարուկի փոխարինում	25,000	
152	Բաշխիչ տուփի առանցքակալի փոխարինում	5,000	
153	Կարդանային լիսեռի հանում և տեղադրում կամ փոխարինում	15,000	15,000
154	Կարդանային լիսեռի խաչուկի փոխարինում	25,000	20,000
155	Բաշխիչ տուփի կալանակի հանում և տեղադրում կամ փոխարինում	20,000	
156	Տվիչի փոխարինում	15,000	10,000

157	Բաշխիչ լիսեռի ատամնանկվի փոխարինում	5,000	
158	Կարդանային լիսեռի միջին կախոցի հանում և տեղադրում կամ փոխարինում	15,000	10,000
	6. Առջևի և հետևի կամրջակներ		
159	Առջևի կամրջակի կիսաստծում հանում և տեղադրում կամ փոխարինում	18,000	15,000
160	Առջևի կամրջակի կիսաստծում առանցքակալի փոխարինում	13,000	13,000
161	Առջևի կամրջակի կիսաստծում առանցքակալի խտաբուկերի փոխարինում	5,000	5,000
162	Կամրջակի յուրի փոխարինում	5,000	5,000
163	Առջևի կամրջակի դիֆերենցիալի փոխարինում	30,000	30,000
164	Հետևի կամրջակի կիսաստծում հանում և տեղադրում կամ փոխարինում	18,000	
165	Հետևի կամրջակի կիսաստծում առանցքակալի փոխարինում	13,000	
166	Հետևի կամրջակի կիսաստծում առանցքակալի խտաբուկերի փոխարինում	5,000	
167	Հետևի կամրջակի բռունցքի գնդածև հենարանի հանում և տեղադրում կամ փոխարինում	15,000	
168	Հետևի կամրջակի դիֆերենցիալի փոխարինում	25,000	
169	Հետևի կամրջակի բլրկավորման համակարգի նորոգում	42,000	
170	Կամրջակի տվիչի փոխարինում	5,000	5,000
	7. Կախոց		
171	Տրավերսի հանում և տեղադրում կամ փոխարինում	37,000	35,000
172	Չալս կամ աջ հողակալի հանում և տեղադրում կամ փոխարինում	10,000	12,000
173	Առջևի անվակունդի առանցքակալների փոխարինում	15,000	12,000
174	Առջևի անվակունդի հանում և տեղադրում կամ փոխարինում	15,000	12,000

175	Հետևի անվակումոյի հանում և տեղադրում կամ փոխարինում	15,000	12,000
176	Հետևի անվակումոյի առանցքակալների փոխարինում	15,000	12,000
177	Անվակումոյի հանասեղի և հերոյսի փոխարինում (մեկ անիվի համար)	4,000	4,000
178	Չախ կամ աջ հողակապի խտաբուկերի փոխարինում	8,000	8,000
179	Չախ կամ աջ հողակապի առանցքակալների փոխարինում	15,000	13,000
180	Ցնցամեղմիչի թասակի փոխարինում	5,000	6,000
181	Առջևի գապանակի փոխարինում	6,000	6,000
182	Առջևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում կամ փոխարինում	8,000	8,000
183	Հարվածամեղմիչի վրանների փոխարինում	4,000	4,000
184	Ներքին լծակի հանում և տեղադրում կամ փոխարինում	10,000	9,000
185	Ներքևի լծակի վրանների փոխարինում 1 հատ	6,000	6,000
186	Ներքևի լծակի հերոյսի փոխարինում	2,000	2,000
187	Առջևի աջ կամ ձախ ձգանների հանում և տեղադրում	8,000	8,000
188	Միջին ձգանի հանում և տեղադրում	8,000	8,000
189	Հարվածիչի (բարձիկի փոխարինում)	4,000	2,000
190	Վերևի լծակի հանում և տեղադրում կամ փոխարինում	15,000	9,000
191	Վերևի լծակի վրանների փոխարինում 1 հատ	9,000	9,000
192	Վերևի լծակի հերոյսի փոխարինում	2,000	2,000
193	Հետևի վերևի լծակի վրանի փոխարինում 1 հատ	9,000	9,000
194	Գնդե հողակապերի պատյանի փոխարինում	3,000	3,000
195	Գնդե հողակապերի փոխարինում	15,000	15,000
196	Ծայրակալների հանում և տեղադրում	9,000	9,000

197	Կայունարարի հանում և տեղադրում կամ փոխարինում	12,000	12,000
198	Առջևի կայունարարի վրանների փոխարինում	6,000	6,000
199	Հետևի կայունարարի փոխարինում	12,000	12,000
200	Կայունարարի կալունակի փոխարինում	12,000	8,000
201	Հետևի զսպանակների փոխարինում	8,000	8,000
202	Հետևի ձգաձողի հանում և տեղադրում կամ փոխարինում	8,000	8,000
203	Հետևի երկաթաձողի հանում և տեղադրում	9,000	9,000
204	Հետևի անկյունագծային լծակի հանում և տեղադրում կամ փոխարինում	9,000	9,000
205	Զսպանի փոխարինում	20,000	20,000
206	Զսպանի վրանների փոխարինում 1 հատ	5,000	5,000
207	Հետևի ցնցամեղմիչի փոխարինում	12,000	10,000
208	Հետևի հարվածամեղմիչի վրանների փոխարինում	2,000	2,000
209	Անկյունագծային լծակի վրանների փոխարինում 1հատ	9,000	9,000
	8. Ղեկային մեխանիզմ		
210	Ղեկայունակի (USuSվՄՈ) հիմնական նորոգում,	66,000	60,000
211	Ղեկայունակի (USuSվՄՈ) արտրիկի փոխարինում	2,500	2,500
212	Ղեկայունակի (USuSվՄՈ) առանցքային աճու փոխարինում	25,000	25,000
213	Ղեկայունակի (USuSվՄՈ) խաչուկների փոխարինում	25,000	25,000
214	Ղեկային մեխանիզմի ազդանշանի փոխարինում	10,000	10,000
215	Ղեկայունակի պատյանի փոխարինում	5,000	5,000
216	Ղեկային մեխանիզմի փականքի փոխարինում	15,000	15,000
217	Ղեկային մեխանիզմի ղեկայունակի ամրացման անուրի փոխարինում	15,000	15,000

218	Ղեկավարին ձողի առանցքակալի փոխարինում	15,000	15,000
219	Ղեկավարին կալունի ձգանների փոխարինում	12,000	12,000
220	Ղեկավարին կալունի միջին ձգանի փոխարինում	13,000	13,000
221	ՂԿ-ի առանցքակալի կամ վրանների փոխարինում	10,000	10,000
222	Հիդրոուժեղարարի հիմնական նորոգում, աշխատանքները	30,000	30,000
223	Հիդրոուժեղարարի փոկի հանում և տեղադրում կամ փոխարինում	8,000	8,000
224	Հիդրոուժեղարարի բարձր ճնշման խողովակի փոխարինում	25,000	25,000
225	Հիդրոուժեղարարի ցածր ճնշման խողովակի փոխարինում	20,000	20,000
226	Ղեկավարին ձգաձողի հանում և տեղադրում կամ փոխարինում	25,000	25,000
227	Հիդրոուժեղարարի համակարգի յուղի փոխարինում	5,000	5,000
228	9. Արգելակային համակարգ		
228	Վակումային ուժեղարարի փոխարինում	25,000	25,000
229	Վակումային ուժեղարարի փականի փոխարինում	5,000	5,000
230	Գլխավոր գլանի հանում և տեղադրում կամ փոխարինում	20,000	20,000
231	Գլխավոր գլանի հիմնական նորոգում, բոլոր աշխատանքների ընդգրկումով	25,000	25,000
232	Աշխատանքային գլանի հանում և տեղադրում կամ փոխարինում	20,000	20,000
233	Աշխատանքային գլանի հիմնական նորոգում	15,000	15,000
234	Առջևի սուպպորտի հանում և տեղադրում կամ փոխարինում	12,000	12,000
235	Հետևի սուպպորտի հանում և տեղադրում կամ փոխարինում	12,000	12,000
236	Առջևի սուպպորտի վերանորոգում	15,000	15,000
237	Հետևի սուպպորտի վերանորոգում	15,000	15,000

238	Արգելակի վթարային արգելահանան լծակի փոխարինում		5,000	5,000
239	Արգելակի վթարային արգելահանան լծակի նորոգում		5,000	5,000
240	Արգելակային փողրակի փոխարինում		5,000	5,000
241	Արգելակային կոճղակների փոխարինում		8,000	8,000
242	Արգելակային համակարգի օդահանում		5,000	5,000
243	Սկավառակային կոճղակների փոխարինում		8,000	8,000
244	Թմբուկային կոճղակների փոխարինում		8,000	8,000
245	Առջևի արգելակային սկավառակի փոխարինում		8,000	8,000
246	Առջևի արգելակային սկավառակի հղկում 1 հատ		9,000	9,000
247	Հետևի արգելակային սկավառակի փոխարինում		8,000	8,000
248	Հետևի արգելակային թմբուկի հղկում 1 հատ		15,000	15,000
249	Ձեռքի արգելակի հանում և տեղադրում կամ փոխարինում		10,000	10,000
250	Ձեռքի արգելակի մեխանիզմի վերանորոգում		15,000	15,000
251	Ձեռքի արգելակի ճոպանի հանում և տեղադրում կամ փոխարինում		12,000	12,000
252	Ձեռքի արգելակային ճոպանի վերանորոգում		10,000	8,000
253	Արգելակային սեղմակի հանում և տեղադրում		5,000	5,000
254	ABS-ի հանում և տեղադրում		30,000	30,000
255	ABS-ի վերանորոգում		25,000	25,000
256	Հետևի արգելակների կարգավորում		5,000	5,000
257	Արգելակային հեղուկի փոխարինում		5,000	5,000
	10. Էլեկտրասարքավորում			
258	Գեներատորի հանում, տեղադրում կամ փոխարինում		15,000	15,000
259	Գեներատորի ստատորի փոխարինում		8,000	8,000
260	Գեներատորի ռոտորի փոխարինում		8,000	8,000

261	Գեներատորի լիցքավորման ռեժիմի փոխարինում	8,000	8,000
262	Գեներատորի դիտարկման կամրջակի փոխարինում	8,000	8,000
263	Գեներատորի առանցքակալի փոխարինում	8,000	8,000
264	Գեներատորի փոկանիվի փոխարինում	8,000	8,000
265	Մեկնարկիչի քանդում արատավորում, հավաքում	15,000	15,000
266	Մեկնարկիչի խարխալի փոխարինում	8,000	8,000
267	Մեկնարկիչի իրանի փոխարինում	8,000	8,000
268	Մեկնարկիչի բռնիչի փոխարինում	8,000	8,000
269	Մեկնարկիչի բեռնեքսի փոխարինում	8,000	8,000
270	Մեկնարկիչի ավտոմատի փոխարինում	8,000	8,000
271	Մեկնարկիչի ռեժիմի փոխարինում	8,000	8,000
272	Մեկնարկիչի ածուխների փոխարինում	8,000	8,000
273	Ազդանշանի կարգավորում	8,000	8,000
274	Ազդանշանի հանում և տեղադրում կամ փոխարինում	5,000	5,000
275	Առջևի լապտերի հանում և տեղադրում կամ փոխարինում	5,000	5,000
276	Սարքերի պանելի հանում և տեղադրում	5,000	5,000
277	Առջևի լապտերների կարգավորում	42,000	42,000
278	Բռնկման կողպեքի հանում և տեղադրում	5,000	5,000
279	Վառոցքի կոճի հանում և տեղադրում	15,000	15,000
280	Բնորոկցիոն կոճի հանում և տեղադրում	6,000	6,000
281	Վազբաչափի ճոպանի հանում և տեղադրում կամ փոխարինում	8,000	8,000
282	Չափիչ սարքերի հանում և տեղադրում	15,000	15,000
283	Չափիչ սարքերի հանում և տեղադրում	10,000	10,000
284	Ապակեկվացիչի հանում և տեղադրում կամ փոխարինում	5,000	5,000
285	Ապակեկվացիչի շարժիչի հանում և տեղադրում կամ փոխարինում	5,000	5,000
	Ապահովիչների փոխարինում	2,000	2,000

286	Ապակեամբարձիչների փոխարինում	17,000	17,000
287	Ապակեամբարձիչների շարժիչի փոխարինում	1,500	1,500
288	Էլեկտրական սովիչների փոխարինում	5,000	5,000
289	Էլեկտրական անջատիչների փոխարինում	5,000	5,000
290	Մարտկոցի կլեյմաների փոխարինում	2,000	2,000
291	Մկումնատորի դրական էլեկտրոլարի փոխարինում	3,000	3,000
292	Ակումյատորի բացասական էլեկտրոլարի փոխարինում	3,000	3,000
293	Էլ/ կոճակի փոխարինում	3,000	3,000
294	Էլեկտրական շտեկվերի փոխարինում	3,000	3,000
295	Դռների կենտրոնական փականի հանում և դեղադրում	13,000	12,000
296	Ազդանշանային համակարգի տեղադրում	15,000	15,000
297	Մագնիսոլային տեղադրում	15,000	15,000
298	Վառարկային լարերի հանում և տեղադրում	15,000	15,000
299	Էլ/հաղորդալարերի մասնակի վերանորոգում	25,000	25,000
300	Էլ/հաղորդալարերի հիմնական խտրիցի հանում և տեղադրում	35,000	35,000
301	Էլ/հաղորդալարերի երկրորդային խտրիցի հանում և տեղադրում	25,000	25,000
302	Զրի ցողիչի փոխարինում	15,000	15,000
303	Բեռնախցիկի փականի փոխարինում	10,000	10,000
304	Հագրիցի փականի փոխարինում	10,000	10,000
	11. Ավտոմեքենայի սրահ		
305	Արտաքին հայելիների տեղադրում կամ փոխարինում	5,000	5,000
306	Դռան փականի փոխարինում	5,000	5,000
307	Բեռնախցիկի ճապանի փոխարինում	5,000	5,000
308	Լամպի փոխարինում	5,000	5,000
309	Ամբակներ (կլիպս) փոխարինում 1հատ	2,000	2,000

12. Այլ ծախսեր				
310	Եռակցման աշխատանքներ գին 1սմ (գծ.մ) համար		5,000	5,000
311	CO գործուն աշխատանքներ գին 1 քառ. սմ-ի համար		5,000	5,000
312	Խառատային աշխատանքներ գին 1 կտորի համար		20,000	20,000
313	Փակվանագործական աշխատանքներ գին 1 ժամ աշխատանքի համար		10,000	10,000
314	Կոնդիցիոնների լիցքավորում		20,000	20,000
315	Կոնդիցիոնների նորոգում		30,000	30,000
316	Առջևի կամ հետևի անվարացքի կարգավորում		10,000	10,000
317	Անիվի հանում և տեղադրում		2,000	2,000
318	Անվարողի վերանորոգում		5,000	5,000
320	Անիվի վալց		2,000	2,000
321	Դիմապակու հանում և տեղադրում կամ փոխարինում		5,000	5,000
322	Ապակիների թաղանթապատում գին 1քմ		15,000	15,000
323	Քարշարկի ծառայություն գին 1կմ, համար		15,000	15,000
	SU-2 ընթացքում օգտագործվող պահեստամասերի, քայտերի և այլ օժանդակ նյութերի անվանումները		500	500
1. Շարժիչ				
1	Շարժիչի գլխիկ		370,000	370,000
2	Բարձիկ		45,000	45,000
3	Շարժիչի գլխիկի միջադիր		25,000	25,000
4	Շարժիչի միջադիրների կոնպլեկտ		80,000	80,000
5	Շարժիչի փական րորս մրող		5,000	5,000
6	Շարժիչի փական ներս մրող		5,000	5,000
7	Շարժիչի փականի խտաբուկ		5,000	5,000
8	Փականի զսպանակ		5,000	5,000
9	Ծնկաձև լիսեռ		200,000	210,000

10	Ծնկաձև լիսեռի խտաբուկ առջևի		15,000	15,000
11	Ծնկաձև լիսեռի խտաբուկ հետևի		15,000	15,000
12	Ծնկաձև լիսեռի արմատական ներդիրներ		15,000	15,000
13	Ծնկաձև լիսեռի շարժաթևային ներդիրներ		15,000	15,000
14	Մխոց		66,000	70,000
15	Մխոցային օղակներ		62,000	65,000
16	Մխոցային մատ		20,000	20,000
17	Ատամնանիվ		15,000	15,000
18	Ատամնավոր փոկ		40,000	40,000
19	Շարժիչի կափարյ		43,000	43,000
20	Շարժիչի կափարյի կափարիչ		66,000	67,000
21	Շարժիչի շրթա		43,000	43,000
22	Շարժիչի պաշտպանիչ		30,000	30,000
23	Փոկի ձգիչ		46,000	47,000
24	Հիլրոձգան		30,000	30,000
25	Հրիչ		40,000	40,000
26	Շարժիչի հիլրոհրիչ		30,000	30,000
27	Շարժիչի կարուն		25,000	25,000
28	Շարժիչի հանդարտիչ		35,000	35,000
29	Շարժիչի հոլովակ		15,000	15,000
30	Շարժիչի հոլովակի առանցքակալ		19,000	19,000
31	Շարժիչի առջևի կափարիչ		35,000	36,000
32	Շարժիչի վերևի կափարիչ		70,000	70,000
33	Շարժիչի վերևի կափարիչի միջադիր		30,000	30,000
34	Թափանիվ		100,000	100,000
35	Շարժաթև		25,000	25,000
36	Ատամնանիվ բաշխիչ լիսեռի		20,000	20,000
37	Ատամնանիվ ձևկաձև լիսեռի		15,000	15,000
38	Փոկանիվ ձևկաձև լիսեռի		15,000	15,000
39	Փոկանիվ		15,000	15,000

40	Մուխարիկ փականի			
41	Գլխիկի բոլո	5,000	5,000	5,000
42	Ծնկանն լիսեռի բոլո	5,000	5,000	5,000
43	Պարկուճ (ՆուճջՈ)	47,000	47,000	47,000
44	Քարտեր	6,000	6,000	6,000
45	Փական յուղի տարայի	25,000	25,000	25,000
46	Խուփ ընդարձակման բաքի	5,000	5,000	5,000
47	Խուփ շարժիչի	5,000	5,000	5,000
48	Թաթիկ յուղի մղիչի	5,000	5,000	5,000
49	Բարձիկ փ/տուսիի	5,000	5,000	5,000
50	Յուղի մղիչ	30,000	30,000	30,000
51	Միջադիր յուղի մղիչի	40,000	40,000	40,000
52	Յուղի ծորակ	15,000	15,000	15,000
53	Շարժիչի բաշխիչ լիսեռ	15,000	15,000	15,000
54	Բ/լիսեռի կապարիչ	130,000	130,000	130,000
55	Բ/լիսեռի խտաբուկ	25,000	25,000	25,000
56	Շարժիչի Բ/լիսեռի ականոց	15,000	15,000	15,000
57	Շարժիչի Բ/լիսեռի երիթակ	10,000	10,000	10,000
58	Ուղղորդիչ վրան	10,000	10,000	10,000
59	Շարժիչի գամանեղ	9,000	9,000	9,000
60	Գլխիկի միջատիք	8,000	8,000	8,000
	2. Ղեկավարման, սնման և յուղման համակարգ	19,000	19,000	19,000
61	Յուղ շարժիչի հանքային, 1 Լ			
62	Յուղ շարժիչի կիսասինթետիկ, 1 Լ	2,500	2,500	2,500
63	Յուղ շարժիչի սինթետիկ, 1 Լ	4,500	4,500	4,500
64	Յուղման համակարգի լվացման հեղուկ 1 Լ	6,000	6,000	6,000
65	Յուղի գտիչ	3,000	3,000	3,000
66	Յուղի պոմպ	6,000	6,000	6,000
67	Յուղի պոմպի շարժաբեր	50,000	50,000	50,000
		15,000	15,000	15,000

68	Յուղի ռադիատոր			
69	Յուղի փողրակ	35,000		35,000
70	Յուղի ծորակ	15,000		15,000
71	Վառոցքի կոճ	10,000		10,000
72	Արտածման կալեկտոր աջ	36,000		36,000
73	Արտածման կալեկտոր ձախ	45,000		45,000
74	Ներածման կալեկտոր աջ	45,000		45,000
75	Ներածման կալեկտոր ձախ	45,000		45,000
76	Արտածման կալեկտորի աջ միջադիր	45,000		45,000
77	Արտածման կալեկտորի ձախ միջադիր	25,000		25,000
78	Ներածման կալեկտորի աջ միջադիր	25,000		25,000
79	Ներածման կալեկտորի ձախ միջադիր	25,000		25,000
80	Վառոցքի մոմ	25,000		25,000
81	Բենզոլաբլի բենզոլաբլի ցանց	8,500		8,500
82	Բենզոլաբլի	5,000		5,000
83	Ինժեկտորի բոցանուղ բենզոլաբլի շարժիչի	40,000		40,000
84	Ինժեկտորի բոցանուղ դիզելային շարժիչի	100,000		100,000
85	Բոցանուղի խտաբուկ	200,000		200,000
86	Վառելանյութի գոլիչ նուրբ մաքրման	10,000		10,000
87	Վառելիքի կոշտ մաքրման գոլիչ	25,000		20,000
88	Վառելանյութի խողովակ	25,000		25,000
89	Աբսելերատորի ճոպան	25,000		25,000
90	Օղի գոլիչ	15,000		15,000
91	Օղի ծախսաչափիչ	12,000		12,000
92	Օղի գոլիչի փողրակ	55,000		55,000
93	Ջերմաստիճանային տվիչ	25,000		25,000
94	Յուղի տվիչ	25,000		25,000
95	Բաշխիչ լիսեռի տվիչ	25,000		25,000
96	Օղի ծախսի տվիչ	25,000		25,000
97	Արագաչափի տվիչ	25,000		25,000

98	Հովհարի տվիչ				
99	Զրի խողովակ երկար	20,000		20,000	20,000
100	Զրի խողովակ կարճ	20,000		20,000	20,000
101	Զրի տվիչ	15,000		15,000	15,000
102	Բենզոլաբաթի տվիչ	15,000		15,000	15,000
103	Մարման ընթացքի կարգավորիչ	15,000		15,000	15,000
104	Դեկավարման համակարգիչ	15,000		15,000	15,000
105	Պարսպ ընթացքի տվիչ	15,000		15,000	15,000
106	Թթվածնի տվիչ	15,000		15,000	15,000
	3. Սառեցման և արտաձման համակարգ				
107	Հովհար				
108	Հովհարի շարժիչ	70,000		70,000	70,000
109	Հովհարի թևանիվ	40,000		40,000	40,000
110	Ռադիատոր	25,000		25,000	25,000
111	Ընդարձակող բաթի փական	85,000		85,000	70,000
112	Ընդարձակող բաթի փողրակ	5,000		5,000	5,000
113	Ընդարձակող բաթ	15,000		15,000	15,000
114	Ռադիատորի փողրակ ներքևի	35,000		35,000	30,000
115	Ռադիատորի փողրակ վերևի	20,000		20,000	20,000
116	Թերմոստատ	15,000		15,000	15,000
117	Զրի մղիչ	20,000		20,000	20,000
118	Զրի մղիչի սիջալիք	50,000		50,000	45,000
119	Զրի պոմպի խտարուկ	2,000		2,000	2,000
120	Զրի պոմպի առանցքավալ	5,000		5,000	5,000
121	Սառեցման հեղուկ 1 լիտր	10,000		10,000	10,000
122	Չաաչող հեղուկ ապակիների համար	3,500		3,500	3,500
123	Չգիչ հողովակի	3,000		3,000	3,000
124	Փոկ մեծ	25,000		25,000	25,000
125	Հովացման համակարգի ռետինե խողովակ	20,000		20,000	20,000
126	Ծորակ	20,000		20,000	20,000
		10,000		10,000	10,000

127	Փոկանիվ գեներատորի փոկի			
128	Խլարարի ներդիր	10,000	10,000	10,000
129	Խլարարի կախոց	10,000	10,000	10,000
130	Կրոնշտեյն	5,000	5,000	5,000
131	Խլարարի անուր (Խամուտ)	5,000	5,000	5,000
132	Շարժիչ վառարանի	1,500	1,500	1,500
133	Վառարանի ռադիատոր	40,000	40,000	40,000
	4. Կցորդում և ՓՏ	40,000	40,000	40,000
134	Կցորդման աշխատանքային գլան			
135	Կցորդման գլխավոր գլան	22,000	22,000	22,000
136	Կցորդման գլխավոր գլանի կալունակ	25,000	25,000	25,000
137	Կցորդման սերմող սկավառակ	15,000	15,000	15,000
138	Կցորդման տարվող սկավառակ	45,000	45,000	42,000
139	Կցորդման առանցքակալ	40,000	40,000	40,000
140	Կցորդման ոտնակ	25,000	25,000	25,000
141	Կցորդման ճուպան	15,000	15,000	15,000
142	ՓՏ-ի յուղ 1լ	15,000	15,000	15,000
143	ՓՏ-ի առջևի խտարուկ	8,000	8,000	8,000
144	ՓՏ-ի հետևի խտարուկ	15,000	15,000	15,000
145	ՓՏ-ի առանցքակալ	12,000	12,000	12,000
146	ՓՏ-ի փոխարկման մեխանիզմ	25,000	25,000	25,000
147	ՓՏ-ի առաջնային լիսեռ	18,000	18,000	18,000
148	ՓՏ-ի երկրորդային լիսեռ	19,000	19,000	19,000
149	ՓՏ-ի միջանկյալ լիսեռ	22,000	22,000	22,000
150	ՓՏ-ի երկվանի	23,000	23,000	23,000
151	ՓՏ-ի ստամանակիվ	12,000	12,000	12,000
152	ՓՏ-ի վերանորոգման կոմպլեկտ	15,000	15,000	15,000
153	Հերմետիկ	210,000	210,000	170,000
	5. Բաշխիչ տուփ, կարդանային լիսեռ	5,000	5,000	5,000
154	Բաշխիչ տուփի խցուկ			
		20,000		

155	Բաշխիչ տուփի առանցքակալ		30,000	
156	Բաշխիչ տուփի ատամնանիվ		40,000	
157	Բաշխիչ տուփի լիսեռ		52,000	
158	Կարդանային լիսեռ		110,000	
159	Էլատիկ մուֆտ		42,000	
160	Կարդանային լիսեռի միջանկյալ հենակ		35,000	
161	Կարդանային լիսեռի խաչուկ		33,000	
	6. Աջջևի և հետևի կամրջակներ			
162	Գլխավոր փոխանցման ատամնանիվների կոնսոլետ		55,000	55,000
163	Դիֆֆերենցիայի աստելլիտ		45,000	45,000
164	Տանող ատամնանիվի խցուկ		21,000	21,000
165	Տանող ատամնանիվի առանցքակալ		25,000	25,000
166	Դիֆֆերենցիայի առանցքակալ		25,000	25,000
167	Ձախ կամ աջ կիսատնու փոշեթիկնոց		20,000	20,000
168	Կիսատնի		80,000	75,000
169	Կիսատնու առանցքակալ		25,000	25,000
170	Կիսատնու միջադիր		12,000	12,000
171	Կիսատնու խցուկ		16,000	16,000
172	Կարգավորիչ տափողակ		12,000	12,000
	7. Կախոց			
173	Կրոնշտեյն		5,000	5,000
174	Աջ կամ ձախ հողակալ		70,000	65,000
175	Աջ կամ ձախ հողակալի փոշեթիկնոց		15,000	15,000
176	Աջ կամ ձախ հողակալի խցուկ		15,000	15,000
177	Անվակունդ		60,000	60,000
178	Անվակունդի խցուկ		40,000	40,000
179	Անվակունդի ներքին առանցքակալ		40,000	40,000
180	Անվակունդի արտաքին առանցքակալ		40,000	40,000
181	Հետևի անվակունդի առանցքակալ		40,000	40,000

182	Հարվածամեդիչի թասակ			
183	Զսպանակ	25,000	25,000	25,000
184	Առջևի հարվածամեդիչ		25,000	25,000
185	Հարվածամեդիչի փոշեթիկնոց		60,000	60,000
186	Հարվածամեդիչի վրան		10,000	10,000
187	Ներքևի լծակ		10,000	10,000
188	Ներքևի լծակի վրան		45,000	45,000
189	Վերևի լծակ		15,000	15,000
190	Վերևի լծակի վրան		45,000	45,000
191	Գնդե հողակապ		15,000	15,000
192	Առջևի կայունարար		25,000	25,000
193	Առջևի կայունարարի վրան		50,000	50,000
194	Առջևի կայունարարի կանգնակ		15,000	15,000
195	Հետևի գսպանակ		25,000	25,000
196	Ճոճանակային լծակի վրան		30,000	30,000
197	Հետևի ցնցամեդիչ		15,000	15,000
198	Հետևի մետաղաձող (շտանգա)		80,000	75,000
199	Հետևի մետաղաձողի (շտանգա) վրան		35,000	35,000
200	Հետևի անկյունագծային լծակ		15,000	15,000
201	Անկյունագծային լծակի վրան		35,000	35,000
202	Զսպակի վրան		15,000	15,000
203	Զսպակի սիջադիր		9,000	
204	Զսպակի բռնիչ		8,000	
205	Ծայրակալ		7,000	
206	Ձգան մեջտեղի		15,000	15,000
207	Աջ կամ ձախ ձգան		19,000	19,000
	8. Ղեկային սեխանիզմ		18,500	18,500
208	Ղեկային կալուն			
209	Ղեկային կալունի առանցքակալ		210,000	210,000
210	Ղեկային կալունի վերանորոգման կոմպլեկտ		30,000	30,000
			26,000	30,000

238	Գեներատոր				
239	Գեներատորի դիողային կամրջակ		84,000		75,000
240	Գեներատորի ռելե		30,000		35,000
241	Գեներատորի արանցքակալ		25,000		28,350
242	Ստարտեր		25,000		25,000
243	Ստարտերի ռելե		55,000		40,000
244	Ստարտերի ածուխ		20,000		20,000
245	Բենդերս		15,000		15,000
246	Ստարտերի կցորդիչ (ավտոմատ)		25,000		20,000
247	Խցիկի լապտերի լամպ		20,000		18,000
248	Արգելակային լապտերի լամպ		1,000		1,000
249	Առջևի թարթիչ լապտերի լամպ		4,000		4,000
250	Հետևի թարթիչի լապտերի լամպ		3,500		3,500
251	Հետևի լապտերի լամպ		3,500		3,500
252	Հակամռուշային լապտերի լամպ		4,000		4,000
253	Առջևի լապտերի լամպ		8,000		8,000
254	Էլեկտրական անջատիչ		10,000		8,000
255	Էլեկտրական տվիչ		15,000		15,000
256	Ապակենաբրիչ		15,000		15,000
257	Բռնկման կողպեք		2,500		2,500
258	Էլեկտրալարերի գլխավոր խուրց		15,000		15,000
259	Էլեկտրալարերի երկրորդային խուրց		55,000		60,000
260	Վառոցքային լարերի խուրց		30,000		30,000
261	Վառոցքի մոմի ծայրակալ		15,000		15,000
262	Վազբաչակի		3,000		3,000
263	Վազբաչակի ճուպան		50,000		45,000
264	Դրան կողպեք		10,000		10,000
265	Սգրանշան		15,000		15,000
266	Ապակեվաղցիչի բաշտկ		20,000		20,000
267	Ապակեվաղցիչի շարժիչ		40,000		40,000
			25,000		25,000

268	Դրձների կենտրոնական փական			
269	Հայելի կողային	25,000		19,500
270	Դիմապակի	50,000		50,000
271	Դռան ապակու սմբարձիչ	80,000		80,000
272	Դռան ապակու էլեկտրասմբարձիչի շարժիչ	25,000		25,000
273	Ներկ, լուծիչ, օժանդակ նյութեր 1 կտորի վերանորոգման համար	20,000		20,000
	Հանրագումարային գումարը	15,000		15,000
	Կատարողի առաջարկած հանրագումարային գին	14,021,200		12,599,550
		7 000 000		6 300 000

* Այն մասերը, որոնք ենթակա չեն վերանորոգման, պետք է խոխարինել նորով, որոնց համար պետք է տրվի հարձակվազն 6 ամիս երաշխիքային սակետ:

Ծառայության մատուցումն իրականացվում է պայանագրի ու ժխեցման ելուօրվանից սինչև 2020 թվականի դեկտեմբերի 25-ը:

Քննանգործընթացի ֆինանսական միջոցները կազմակերպվում է ՀՀ ՊԵԿ 2020 թվականի Բյուջետային միջոցներով նախատեսված սուկացումների հաշվին:

Հարթող ճանաչվելու է ըստ չափաբաժինների նվազագույն հանրագումարային գին ներկայացրած մասնակիցը:

Այլ պայաններ

Կատարողը պարտավոր է Պատվիրատուի պահանջով տրամադրել տեղեկանք՝ Պատվիրատուի տրանսպորտային միջոցը Կատարողի իսպասարկման կայան ներկայացնելու օրվա և ժամի մասին:

Ծառայությունները պետք է մատուցվեն Պատվիրատուի տրանսպորտային միջոցը Կատարողի տեխնասարկման կայանում սնցվելու օրվանից հաշված երեք աշխատանքային օրվա ընթացքում առանց պահեստամասերի փոխարինման ծառայությունների պրում և հինգ աշխատանքային օրվա ընթացքում պահեստամասերի փոխարինումով ծառայությունների դեպքում: Առանձին դեպքերում, փոխարինվող պահեստամասերը տվյալ պահին առկա չեն Պատվիրատուի համաձայնությամբ կարող է սահմանվել ծառայությունների տուցման այլ ժամկետ:

Կատարողը պարտավոր է ունենալ Տեխ. Սպասարկման կայան Երևան քաղաքում:

Տեխ. Սպասարկման կայանը նույն վայրում պետք է ունենա առնվազն 2 ամբարձիչ՝ սինխում երեք տոննա բարձրացնելու ողությամբ, դիտափոս, ինժեկտորի լվացման և կարգավորման ստենդ, էլեկտրական բնույթի խափանումները վերացնելու

նարավորություն, ավտոփականագործ, շարժիչագործ, ավտոէլեկտրիկ, ինժեկտորային մասնագետ, ախտորոշման/դիագնոստիկ սարք շված ավտոմեքենաների ծրագրով, կատարի շարժիչի և նրա համակարգերի, ուժային և դեկավարման համակարգերի ընթացակարգերի և մասի և ապահովումը:

5. Պետք է ապահովված լինի փակ և պահպանվող տարածքով՝ պահակային ծառայության կողմից 24 ժամ հսկողություն իրականացվող տարածքում:

6. Պետք է ունենա ավտոքարշակ՝ 3.5 տոննա նվազագույն բեռնատարողությամբ, որը վթարված ավտոմեքենան անկախ դրա գտնվելու վայրից պետք է տեղափոխի տեխ. Սպասարկման կայան:

7. Ավտոմեքենայի անհրաժեշտ նորոգման և տեխնիկական սպասարկման համար հատարողը պարտավոր է Պատվիրատուի նշված ամսակետում և պահանջով ընդունել ավտոմեքենան SU կայան և անմիջապես իրականացնել ախտորոշման, անհրաժեշտ քանդման, պահանջարկի և գնահատման աշխատանքներ:

8. Յուրաքանչյուր ավտոմեքենայի սպասարկման և նորոգման համար Պատվիրատուի պահանջով հատարողի կողմից կազմվում, կնքվում և պատվիրատուին է ներկայացվում նախնական գնման և գնահատման ակտ:

ՊԱՏՎԻՐԱՏՈՐ

ՀՀ պետական եկամուտների կոմիտե
Ք.Երևան, Մ. Խորենացի 3,7

ՀՎՀՀ 02647057

Հ/Հ900011054013

ՀՀ ՖՆ աշխատակազմի
գործառնական վարչություն

Գլխավոր քարտուղար



ԿԱՏԱՆՈՂ

«ԷԼԻՏ ԷՍՎԵ» ՍՊԸ

ՀՀ, Ք.Երևան, Ահարոնյան 22 փ.բն.30

«Աներիաբանկ» ՓԲԸ

Հ/Հ 1570030407870200

ՀՎՀՀ 00465342

Տնօրեն



Հավելված N 2
 24 » Նոյեմբեր 2020թ. կնքված
 ՀՀ ՊԵԿ-ԳՀՇՁԲ-2020/11 ձածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Հարկային կատեգորիա	Մարման անվանումը	Սպորտային կատեգորիա	Սպորտային կատեգորիայի համար	Նախատեսված ֆինանսավորելի 2020թ. ՀՀ պետական բյուջեի միջոցներով նախատեսված հատկացումների հաշվին, բառ ամիսները՝ ընդ որում	Հնդամներ
1	Վճարողի անվանումը Վճարողի անվանումը Վճարողի անվանումը	Միջուկի L-200 2.5TD, /2011, 2013, 2015թ/	50111170/15	4-րդ եռամսյակ	600,000
2	Վճարողի անվանումը Վճարողի անվանումը	Ֆորդ Կոնեկտ 1.8 /2010թ/ Ֆորդ-սթանգիստ /2017թ/	50111170/16		400,000

Վճարողի անվանումը և անձնականացում են ածողականացումը

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ պետական կառավարման կոմիտեի
 ք. Երևան, Մ. Խորենացի 3,7
 ՀՎՀՀ 02647057
 Հ/ՀՅՈՈՈ11054013
 ՀՀ ՖՆ աշխատակազմի
 գործառնական վարչություն
 Գլխավոր քարտուղար



ԿԱՏԱՂՈՂ

«ԷԼԻՏ ԷՄՎԵ» ՍՊԸ
 ՀՀ, ք. Երևան, Ախարոյան 22 փ. բն. 30
 «Անրիսարանկ» ՓԲԸ
 Հ/Հ 1570030407870200
 ՀՎՀՀ 00465342
 Տնօրեն



Պայմանագրի կողմ

 գտնվելու վայրը _____
 հհ _____
 հվհհ _____

Պատվիրատու

 գտնվելու վայրը _____
 հհ _____
 հվհհ _____

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
 ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՍԴՐԱՄԻՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ
 ՀԱՆՁՆՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ**

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ _____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ « » « » 20 թ.

Պայմանագրի համարը՝ _____

Պատվիրատունն Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N _____ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	Մատուցված ծառայությունների				Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը			
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկ կողմի հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը ընդ որակյալ եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց

_____ ստորագրություն
 _____ ազգանուն, անուն
 Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց

_____ ստորագրություն
 _____ ազգանուն, անուն
 Կ.Տ.

ԱԿՏՆ

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Մույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____-ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման
նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Մույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

ազգանուն, անուն

ստորագրություն

Ընդունեց

հայտը նախագծած ներկայացուցիչ՝

ազգանուն, անուն

ստորագրություն